Արձանագրություն թիվ 1

2022թ. սեպտեմբերի 5 - ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 4-րդ Ա դասարանի առաջին ծնողական ժողովը:
Ժողովին ներկա էին բոլոր ծնողները:
Ժողովին մասնակցում էր տնօրենի մասնագիտացված կրթական աջակ-ցությունների տեղակալ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

1. Ծանոթություն ծնողների հետ
2. Ծնողական խորհրդի վերընտրություն
3. Ընթացիկ հարցեր

1.Լսեցին -« Ծանոթություն ծնողների հետ» հարցը:

Ընկեր Հ. Սարգսյանն ասաց, որ ինքն է 4-րդԱ նոր դասղեկը: Նա շնորհավորեց ծնողներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ և հաջողություն մաղթեց իրենց համատեղ աշխատանքում: Ծանոթացավ ծնողների հետ և ասաց,որ ակնկալում է համագործակցային համատեղ և միջավայրային առողջ աշխատանք:

Որոշեցին.- Համագործակցել դասղեկի հետ և օգնել նրան:

2.Լսեցին.- « Ծնողական խորհրդի ընտրություն» հարցը:

Հ.Սարգսյանն ասաց, որ պետք է կատարվի ծնողական խորհրդի կազմի վերընտրություն: Ծնողների առաջարկությամբ ընտրվեց ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝

1.Հայրապետյան Աննա
2.Մարտիրոսյան Անահիտ
3.Հարությունյան Սուսաննա
4.Մովսիսյան Շուշաննա
5.Մարգարյան Անուշ

Ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Մովսիսյան Շուշաննան:

Որոշեցին. Ակտիվորեն աշխատել և օգնել դպրոցին և դասարանին:

3. Լսեցին. - Ընթացիկ հարցեր:

Ընկեր Սարգսյանն ասաց, որ երեխաները տարվա վերջում հանձնելու են ավարտական քննություններ «Մաթեմատիկա» և «Մայրենի» առարկաներից: Պետք է քրտնաջան և մշտական աշխատանք, որպեսզի երեխաները կարողանան հաջողությամբ հանձնել քննությունները:
Խոսվեց նաև տարվա ընթացքում տրվող թեմատիկ և գործնական աշխատանքների մասին: Որպեսզի ավելի հեշտ կազմակերպվեն այդ աշխատանքները, նպատակահարմար է ունենալ ԿԳՄՍ-ի կողմից երաշխավորված պատրաստի տետրերը: Ծնողները հավանություն տվեցին այդ առաջարկին և որոշեցին ձեռք բերել:

Որոշեցին. - Մինչև թեմատիկ գրավոր աշխատանքների տալը, ձեռք բերել «Մաթեմատիկա», «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների համար նախատեսված թեմատիկ տետրեր:

Ժողովի նախագահ՝ Շ. Մովսիսյան
Ժողովի քարտուղար՝ Ան. Հայրապետյան